ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ

ԾՐԱԳԻՐ

(2014-2018թթ.)

(նոր խմբագրությամբ)

ՆԱԽԱԲԱՆ

Սույն ռազմավարական ծրագիրն ուրվագծում է ՀՀ ԳԱԱ 2014 - 2018 թթ. գործունեության հիմնարար ուղղությունները՝ ելակետ ունենալով հաստատության զարգացման հեռանկարները: Ծրագրում համակցված են Գիտակրթական միջազգային կենտրոնի (այսուհետ՝ ԳԿՄԿ կամ Կենտրոն) գործունեության ավանդական և նոր մոտեցումները՝ ի նպաստ մրցունակ բազմաոլորտային մասնագիտական կրթության, անհատի և հասարակության առաջընթացի: Ծրագիրը մշակվել է ակադեմիայի կառուցվածքային ստորաբաժանումների գործուն մասնակցությամբ՝ հաշվի առնելով ակադեմիական բազմաոլորտային մասնագիտական կրթության արդի հիմնահարցերի և գործընթացների, Կենտրոնի ներքին և արտաքին շահակիցների դաշտի, Կենտրոնի կարողությունների և գործունեության միջավայրի վերլուծության արդյունքները: Փաստաթղթում սահմանված են ԳԿՄԿ-ի (Գիտակրթական միջազգային կենտրոն) հայեցակարգային մոտեցումները, որոնք կողմնորոշելու են նրա առաջիկա գործունեությունը և հավակնությունները կրթական, գիտական, հետազոտական և սոցիալական պատասխանատվության ուղղություններով: Տրված հայեցակարգային շրջանակները հիմք են լինելու գործողությունների պլանի մշակման և ռազմավարական ծրագրի իրականացման, վերահսկման և գնահատման համար՝ հետևյալ ինստիտուցիոնալ ուղղություններով. ուսումնական գործընթաց, ուսանողական համակազմ, պրոֆեսորադասախոսական կազմ, գիտական և հետազոտական գործունեություն, Գիտակրթական միջազգային կենտրոնի գործունեության միջազգայնացում, ֆինանսատնտեսական գործունեություն և նյութատեխնիկական հենք, տեղեկատվական տեխնոլոգիաներ, կառավարում, սոցիալական պատասխանատվություն: Ծրագրի իրագործման ընթացքը ուղեկցվելու է Գիտակրթական միջազգային կենտրոնի ձեռքբերումների, ներքին և արտաքին միջավայրի փուլային վերլուծությամբ և գնահատմամբ: Այն թույլ կտա քայլել ժամանակին համընթաց և նախաձեռնողական լինել նոր մարտահրավերներին ընդառաջ:

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ 2014-2018 թթ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՔՈՒՄ ԸՆԿԱԾ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գիտակրթական միջազգային կենտրոնի ռազմավարական պլանավորման գործընթացի իրականացման դրդապատճառների հիմքում առկա են հետևյալ հիմնախնդիրները՝

- Բարձրագույն կրթության աճող և փոփոխվող պահանջարկը, աճող և գլոբալացող մրցակցությունը, ինչը Գիտակրթական միջազգային կենտրոնից պահանջում է գնահատել, համադրել և անընդհատ մեծացնել իր մրցակցային առավելություններն ու ներուժը:
- ՀՀ ԳԱԱ համակարգի մտավոր, գիտամանկավարժական, ինովացիոն ներուժի, տեխնիկական և լաբորատոր հնարավորությունների կիրառմամբ երիտասարդ կադրերին գիտահետազոտական գործունեության իրականացմանը և գիտական հասարակության ներգրավմանը:
- Տնտեսության ինովացիոն վերափոխումները և վերակողմնորոշումը դեպի

գիտահենք, բարձր տեխնոլոգիական բնագավառները էապես փոխել են բուհերի կողմից պատրաստվող մասնագիտական և հետազոտական աշխատուժի նկատմամբ որակական պահանջները:

- Գիտության առջև ծառացած նոր խնդիրները, որոնք նոր մտածողությամբ կադրեր են պահանջում, աշխարհի գիտական զարգացման գործընթացից դուրս չմնալու, 21-րդ դարում մրցունակ գիտական կադրեր պատրաստելու միտումը, Գիտակրթական միջազգային կենտրոնից պահանջում է ներդնել և արդյունավետորեն իրականացնել ուսուցման և դասավանդման ժամանակակից ձևեր և մեթոդներ անմիջապես Գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում, որի շնորհիվ լավագույնս կօգտագործվի ԳԱԱ մտավոր, գիտամանկավարժական ներուժը, տեխնիկական և լաբորատոր հնարավորությունները:
- Բոլոնիայի գործընթացին համապատասխան ուսանողակենտրոն մոդելների երևան գալը, հասարակական կրթական պահանջմունքների, աշխատաշուկայի կարիքների և Կենտրոնի կրթական առաջարկի միջև խորացող ճեղքվածքը, գործոններ, որոնք առկայությունը պահանջում է Կենտրոնի վերափոխում:
- Պետական ոչ բավարար ֆինանսավորումը, որը Կենտրոնից պահանջում է դառնալ ավելի նախաձեռնող և ձեռներեց՝ աճող ֆինանսավորման պակասորդը այլ աղբյուրներից լրացնելու համար:

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնը ազգային և տարածաշրջանային դերակատարությամբ գիտակրթական և գիտամշակութային հաստատություն է, որի հիմնական առաքելությունն է խթանել երկրի սոցիալ-տնտեսական զարգացումն ու միջազգային կրթական տարածքին ինտեգրումը, ապահովել որակյալ ու մրցունակ կրթություն՝ նպաստելով անհատի շարունակական զարգացմանը՝ գիտակրթական ոլորտում գիտելիքի ստեղծման, փոխանցման միջոցով՝ իրականացնելով կրթությունից գիտություն սահուն անցումը և փոխշաղկապվածությունը:

Այն նպատակաուղղված է՝

- Գիտակրթական ոլորտի արդի պահանջներին համահունչ մասնագետների պատրաստմանն ու վերապատրաստմանը.
- կենտրոնի հետազոտական հնարավորությունների զարգացմանն ու գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեության խթանմանը.
- կրթության միջազգայնացմանն ու մրցունակության ապահովմանը.
- ուսուցման, գիտական հետազոտությունների և հանրությանը մատուցվող ծառայությունների ոլորտներում նորարարությունների ներմուծմանը.
- ակտիվ քաղաքացիական, հասարակական կյանքի բարելավմանն ուղղված գիտակրթական գործընթացի իրականացմանը, մասնագիտական առաջխաղացմանն ու հարատև ուսումնառությանը.
- գլոբալացված հասարակության և աշխատաշուկայի ժամանակակից պահանջմունքներին համապատասխան մագիստրոսների և ասպիրանտների պատրաստմանը:

ԿԵՆՏՐՈՆԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնը ձգտում է դառնալ հաստատություն,

- որը միտված է շարունակաբար ՀՀ ԳԱԱ գիտական հասարակության և ակադեմիական գիտահետազոտական ինստիտուտների հետ սերտ կապեր պահպանելուն, ակադեմիական համակարգի ինստիտուտներում նոր ամբիոններ

ստեղծելուն,
- որը կնպաստի ակադեմիայի համակարգում երիտասարդ գիտական կադրերի համալրմանը,
- որն մագիստրոսներին պատրաստում է լիարժեք ինքնադրսևորման, մասնագիտական առաջընթացի և կարիերայի համար,
- որն ապահովում է առաջնակարգ կրթություն դասախոսների ու սովորողների արդյունավետ համագործակցության միջոցով,
- որը շարունակելու է նպաստել իր մագիստրոսների և ասպիրանտների արագ ինտեգրմանը գիտական հասարակություն,
- որն իր մագիստրոսներին առաջարկում է համակողմանի գիտելիքներ և հմտություններ ապահովող գիտակրթական ծրագրեր՝ խարսխված ավանդված լավ փորձի, առաջավոր հետազոտության, ստեղծագործ աշխատանքի և նորարարության վրա,
- որը հասանելի է հատկապես գիտության ուղի ոտք դրած երիտասարդների համար և ընտրության լայն հնարավորություններ է ընձեռում հասարակության ամենատարբեր շերտերին,
- որը ձգտում է իր մագիստրոսներին և դասախոսներին տրամադրել բարձրորակ կրթություն և հետազոտություններ իրականացնելու համար անհրաժեշտ ուսումնական ժամանակակից ենթակառուցվածքներ, տեխնիկական միջոցներ և սարքավորումներ,
- որը փորձում է իր անվանը համահունչ միջազգային և ներպետական պայմանագրեր կնքել՝ իր մագիստրոսների շարունակական կրթությունն ու մասնագիտական շարժունակության հնարավորությունն ապահովելու նպատակով,
- որը միտված է շարունակաբար զարգացնելու համագործակցությունը արտասահմանյան առաջատար բուհերի և գիտակրթական կենտրոնների հետ,
- որը ՀՀ ԳԱԱ-ի ռեսուրսային հնարավորությունների օգտագործմամբ անընդհատ կկատարելագործի իր գիտակրթական ներուժը,
- որը ՀՀ ԳԱԱ-ի վարկանիշին և հեղինակությանը համահունչ կայուն և հաստատուն քայլերով առավելապես ընդլայնելու է իր միջազգային ճանաչումն ու համբավը:

ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կրթական
Գիտական-հետազոտական
Ծառայություններ հասարակությանը

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի գործունեության հիմքում ընկած են հետևյալ հիմնարար արժեքները՝

1. Մագիստրոսի հաջողությունը և ինտեգրումը գիտական հասարակայնությանը.
2. անձի մասնագիտական և համակողմանի զարգացումը.
3. մատչելի կրթությունը.
4. կենտրոնի գիտամանկավարժական կազմը.
5. միջբուհական համագործակցությունը.
6. գիտակրթական գործունեության շարունակական և անընդհատ բարելավումը, ինտեգրումը միջազգային գիտահետազոտական և գիտակրթական

կենտրոններին.
7. ժողովրդավարական միջավայրը և բազմակարծությունը.
8. սոցիալական պատասխանատվությունը.
9. հաշվետվողականությունը:

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Բարձրորակ կրթություն և հետազոտություններ,
- հանրային ներգրավվում և ծառայություններ,
- որակյալ կադրային ներուժ,
- որակյալ ենթակառուցվածքներ,
- ընդունելության բազմազանեցված մուտք՝ պետության պահանջներին և ընդունված պետական չափանիշներին համապատասխան,
- գիտական և նորարարական գործունեություն,
- արտաքին կապեր և միջազգայնացում,
- մտավոր գործունեություն և առաջանցիկ կրթափորձի տարածում,
- ֆինանսական կայունություն,
- արդյունավետ կառավարում,
- ռազմավարական գործակցություն:

ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

- Կրթության ձևի և բովանդակության շարունակական ու միասնական արդիականացում և համալրում,
- կրթության որակի ապահովում,
- կրթական, գիտական ու հետազոտական գործընթացների առաջընթաց, միասնականացում և միջազգայնացում,
- դասախոսների և ուսումնառողների, ինչպես նաև արտաքին շահակիցների ստեղծագործական համագործակցություն,
- կառավարման նորարարական մոտեցումների կիրառում,
- ակադեմիական ազատությունների և համալսարանական ինքնավարության զարգացում,
- մտավոր սեփականության պահպանում,
- մարդկային ռեսուրսների ռազմավարական պլանավորում և կառավարում:

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԱՍ I
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
(ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ)

ՆՊԱՏԱԿ 1. *Կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում, կրեդիտային համակարգի ընդլայնված կիրառություն կրթական բոլոր ծրագրերում և ուսուցման ձևերում արդի միջազգային ծրագրային չափանիշներին համահունչ:*

Ռազմավարական այս նպատակի իրականացումը պայմանավորված է հետևյալ կոնկրետ խնդիրների լուծմամբ՝

- ուղենիշ ունենալով ներպետական և եվրոպական ծրագրային չափանիշները՝ մասնագիտությունների և մասնագիտացումների ճշգրտում մագիստրոսական և հետազոտական ծրագրերում.
- կառուցվածքային և բովանդակային վերանայմամբ կրթական ծրագրերի արդիականացվում համապատասխան եվրոպական կրթական չափանիշներին.
- գիտելիքների մատուցման և գնահատման համակարգի կատարելագործում, ուսուցման առաջադիմական մեթոդների և մեխանիզմների ներդնում.
- կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի (ECTS)-ի հիման վրա մագիստրոսների գիտելիքների գնահատման չափանիշների մշակում և իրականացում.
- պոտենցիալ գործատուների պահանջների ուսումնասիրման, վերջիններիս համահունչ ուսումնական գործընթացի արդիականացման ուղղությամբ աշխատանքների իրականացում.
- Կենտրոնի որակավորման աստիճանների և մասնագիտությունների ելքային կրթական արդյունքների լրակազմի մշակման ուղղությամբ աշխատանքների շարունակականության ապահովում.
- պոտենցիալ գործատուների պահանջների ուսումնասիրման ուղղությամբ աշխատանքների իրականացում՝ ծրագրերի արդիականացման և շրջանավարտների աշխատանքի անցնելու հնարավորությունները մեծացնելու նպատակով:

ՆՊԱՏԱԿ 2. *Որակի ներքին վերահսկման համակարգի ներդրում, պարբերական ինքնավերլուծություն, թիրախային գործողությունների պլանավորում և իրականացում:*

Ռազմավարական այս նպատակի իրականացումը պայմանավորված է հետևյալ կոնկրետ խնդիրների լուծմամբ՝

- Կենտրոնի կրթության որակի ներքին վերահսկման համակարգի ստեղծում, կրթական ծրագրերի և գործընթացների որակի բարելավման չափանիշների ու մեխանիզմների ներդրում.

- Կրթության որակի ապահովման և ինքնավերլուծության համակարգի ու մշտադիտարկման մեխանիզմների կատարելագործում.
- Կենտրոնի գործունեության հիմնական ուղղությունների ինքնագնահատման չափանիշների մշակում՝ հիմք ընդունելով միջազգային հավատարմագրող կազմակերպությունների և ՄԿՈԱԱԿ-ի որդեգրած հավատարմագրման չափանիշներն ու չափորոշիչները.
- մասնագիտական կրթության որակավորումներին և դրանց ընդհանուր բաղադրիչների պահանջներին համարժեք շրջանավարտների մասնագիտական կոմպետենցիաների գնահատման գործուն համակարգի ստեղծում.
- ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխան կադրային-ռեսուրսային ապահովվածության գնահատման ներքին չափանիշների և ընթացակարգերի ստեղծում.
- ղեկավարվելով միջազգային հավատարմագրող կազմակերպությունների և ՄԿՈԱԱԿ-ի որդեգրած հավատարմագրման չափանիշներով ու չափորոշիչներով՝ ՀՀ ԳԱԱ գիտահետազոտական ինստիտուտների և ՄԿՈԱԱԿ-ի հետ համատեղ հետազոտական ծրագրերում՝ ինքնագնահատման և որակի ապահովման չափանիշների մշակում.
- դասախոսական կազմի մասնագիտական կարողությունների և մանկավարժական հմտությունների գնահատման համար մեխանիզմներ և չափանիշների ստեղծում.

ՆՊԱՏԱԿ 3. *Կենտրոնի բոլոր կրթական ծրագրերում և ուսուցման ձևերում կրեդիտային համակարգի ընդլայնված կիրառության ապահովում:*

Ռազմավարական այս նպատակի իրականացումը պայմանավորված է հետևյալ կոնկրետ խնդիրների լուծմամբ՝

- ասպիրանտուրայում ամբողջությամբ մոդուլացված, կրեդիտային հենքով ճկուն ուսումնական ծրագրերին անցում.
- շահակիցների լրացուցիչ, շարունակական կրթությունը անհատական ծրագրերով կազմակերպելու նպատակով համապատասխան պայմանների ստեղծում.
- կրեդիտային համակարգի կիրառության տիրույթի շարունակական ընդլայնում՝ ընդգրկելով հեռակա ուսուցումը, ասպիրանտուրան և հետբուհական, ինչպես նաև լրացուցիչ կրթության համակարգը:

ՆՊԱՏԱԿ 4. *Ուսումնառության, դասավանդման և գնահատման գործընթացների էական բարելավման համար նպաստավոր պայմանների և խթանող մեխանիզմների ստեղծում:*

Ռազմավարական այս նպատակի իրականացումը պայմանավորված է հետևյալ կոնկրետ խնդիրների լուծմամբ՝

- Առաջավոր գիտամանկավարժական փորձի խրախուսման և տարածման

ներակադեմիական մեխանիզմների զարգացում, ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրում.

- ուսանողների առաջընթացի և ձեռքբերումների մոնիթորինգի իրականացում.
- կրթության ստորաբաժանումների միջև իրականացվող աշխատանքների փոխհամաձայնեցվածության ապահովում.
- կրթության ոլորտում միջազգային համագործակցության և շարժունության հնարավորությունների ընդլայնում.
- խթանում ուսանողների մասնակցությանը կրթական ծրագրերի մշակման և մշտադիտարկման ու վերահսկողության գործընթացում:

ՆՊԱՏԱԿ 5. *Կենտրոնի ուսումնական գործընթացներում տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ կիրառման ապահովում:*

Ռազմավարական այս նպատակի իրականացումը պայմանավորված է հետևյալ կոնկրետ խնդիրների լուծմամբ՝

- Տեխնոլոգիապես հագեցված և էլեկտրոնային (On-line) ուսուցման լսարանային ցանցի ձևավորում, վիրտուալ միջավայրի ստեղում և Կենտրոնի ուսումնական գործընթացում կիրառման խթանում, պրոֆեսորադասախոսական համակազմին վերապատրաստում էլեկտրոնային ուսուցման դասընթացների ուղղությամբ.
- անհրաժեշտ կադրային, տեխնոլոգիական և մեթոդական ռեսուրսների ստեղծում՝ էլեկտրոնային եղանակով ուսուցման դասընթացների մշակման և ներդրման նպատակով.
- Կենտրոնի հեռաուսուցման հարթակի կիրառություն խթանում,Վեբ-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգի ներդրում՝ ուսումնառության, դասավանդման, խորհրդատվության և գնահատման էլեկտրոնային ռեսուրսների հասանելիության ապահովում:

ՆՊԱՏԱԿ 6. *Գիտահետազոտական աշխատանքների ծավալի աճի և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածության ընդլայնման համար նախադրյալների ստեղծում, Կենտրոնի հետազոտական աշխատանքների միջազգայնացման գործընթացների խթանում:*

Ռազմավարական այս նպատակի իրականացումը պայմանավորված է հետևյալ կոնկրետ խնդիրների լուծմամբ

- հետազոտական նախագծերում դասախոսական կազմի ներգրավվում.
- գիտական ծրագրերում ասպիրանտների և մագիստրատուրայի ուսանողների մասնակցության ապահովվում.
- մագիստրոսական ծրագրի հետազոտական կողմնորոշմանն ու ուղղվածությանը նպաստում, ատենախոսական թեմաների շաղկապում Կենտրոնում և ԳԱԱ

համակարգում իրականացվող գիտական նախագծերին և գիտահետազոտական խնդիրներին.

- ուսանողների պրակտիկաների կիրառական-հետազոտական ուղղվածության խրախուսում.
- մագիստրոսական ատենախոսական աշխատանքների ղեկավարման և կատարման գործընթացում ԳԱԱ համակարգի գիտահետազոտական, տեխնիկական և լաբորատոր ներուժի ներգրավում.
- առաջատար գիտահետազոտական կազմակերպություններում դասախոսների վերապատրաստմանը աջակցում, միջակադեմիական գիտական, գիտակրթական բնագավառների գործընկերների հետ համատեղ գիտահետազոտական և փորձագիտական աշխատանքներին ընդգրկվածության խրախուսում:

ՆՊԱՏԱԿ 7. *Գիտակրթական միջազգային կենտրոնի միջազգային կապերի ընդլայնում, Եվրոպական համալսարանների և բարձրագույն կրթության միջազգային կառույցների հետ կրթական և գիտական համագործակցության խթանում:*

Ռազմավարական այս նպատակի իրականացումը պայմանավորված է հետևյալ կոնկրետ խնդիրների լուծմամբ՝

- Կենտրոնի միջազգային գործունեության դաշտի ընդլայնում, միջազգային համագործակցության ծրագրերում Կենտրոնի բոլոր բաժինների և ամբիոնների ներգրավմանը նպաստում.
- Կենտրոնի միջազգային գործունեության տեղեկատվական ապահովման բարելավում, նախագծերի մշակմանը, դրամաշնորհների ձեռքբերմանն ու միջազգային կապերի ձևավորմանն աջակցող մարմնի ստեղծում.
- Կենտրոնի ուսանողների և գիտամանկավարժական կազմի միջազգային փոխանակման ծրագրերին մասնակցության խթանում.
- Կենտրոնի ամբիոնների կրթական ծրագրերում հրավիրյալ օտարերկրյա դասախոսների մասնակցության ընդլայնման համար նպաստավոր պայմանների ստեղծում.
- արտասահմանյան առաջատար բուհերի ու գիտակրթական կենտրոնների հետ համագործակցության պայմանագրերի և հուշագրերի կնքում՝ գիտակրթական գործունեության բարելավմանն ու կատարելագործմանը միտված համատեղ աշխատանքների իրականացում:

ՆՊԱՏԱԿ 8. *Որակավորումների համաեվրոպական չափանիշներին, պահանջներին համապատասխան ասպիրանտուրայի՝ որպես բարձրագույն կրթության երրորդ աստիճանի վերակառուցում:*

Ռազմավարական այս նպատակի իրականացումը պայմանավորված է հետևյալ կոնկրետ խնդիրների լուծմամբ՝

- Կենտրոնի ասպիրանտուրայի վերակառուցում՝ նպատակաուղղելով ասպիրանտական կրթությունը դեպի արդյունավետ հետազոտական և մասնագիտական աշխատանք կատարելու ունակ շրջանավարտների պատրաստում.

- ասպիրանտուրայի կառուցավորված գիտակրթական ծրագրի մշակում և ներդրում՝ համապատասխան ECTS կրեդիտներով ու կրթական և հետազոտական կառուցամասերով.

- ուսումնական գործընթացի կազմակերպումը, ասպիրանտների ղեկավարումը, ակադեմիական առաջընթացի ու որակի մոնիթորինգը, գնահատումը (ապահովումը) և ատեստավորումը կարգավորող համապատասխան կանոնակարգերի և ընթացակարգերի ստեղծում ու կիրարկում.
- ասպիրանտական կրթության վերակողմնորոշում դեպի համապատասխան մասնագիտությունների կադրային ապահովմանը.
- Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում ասպիրանտների ակադեմիական շարժունության խթանում, արտասահմանյան առաջատար բուհերի հետ համատեղ ասպիրանտական ծրագրերի ստեղծում և իրականացում:

ՄԱՍ II

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱԴՐԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԸ
(ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ)

ՆՊԱՏԱԿ 1. *Կենտրոնի կադրային ներուժի զարգացում և նպաստում նրանց մասնագիտական, հետազոտական, ստեղծագործական նախաձեռնության աճին:*

Ռազմավարական այս նպատակի իրականացումը պայմանավորված է հետևյալ կոնկրետ խնդիրների լուծմամբ՝

- դասախոսական կազմի գնահատման իրականացում՝ ըստ մասնագիտական պատրաստության, մանկավարժական վարպետության, անձնային որակների և տարիքային կազմի.
- կրթական գործընթացի կադրային ապահովվածության գնահատում՝ ըստ գիտակարգերի, կրթական մակարդակների ծրագրերի.
- դասախոսական կազմի համալրման և կատարելագործման երկարաժամկետ ծրագրի մշակում.
- դասախոսական պաշտոնների տեղակալման չափանիշների և գործընթացների կատարելագործում.
- Կենտրոնի դասախոսական կազմի մասնագիտական աճին նպաստում՝ խրախուսելով գիտահետազոտական աշխատանքներն ու նրանց գրքերի, ձեռնարկների հրատարակումը.
- դասախոսների ինքնակրթությանը և գիտական ու մանկավարժական շարժունության խրախուսում.
- Կենտրոնի կադրային ներուժի անհատական և մասնագիտական ինքնահաստատման համար բարենպաստ կորպորատիվ միջավայրի ստեղծում:

ՆՊԱՏԱԿ 2. *Կենտրոնի կադրային ներուժի սոցիալական բավարարվածության մակարդակի բարձրացում:*

Ռազմավարական այս նպատակի իրականացումը պայմանավորված է

հետևյալ կոնկրետ խնդիրների լուծմամբ՝

- դասախոսական կազմի աշխատանքի վարձատրության տարբերակման մեխանիզմների զարգացում՝ ըստ գործունեության արդյունքների, աշխատանքի արդյունավետության և մասնագիտական կատարելագործման.
- համակողմանիորեն զարգացնելով սոցիալական ենթակառուցվածքները՝ Կենտրոնի սոցիալական ծրագրերի շրջանակի ընդլայնում.

Նպատակ 3. *Ուսումնական գործընթացի իրականացման նյութատեխնիկական պայմանների բարելավվում, ուսումնական և գիտական լաբորատոր բազայի՝ զարգացում և արդիականացում՝ կրթական և հետազոտական ծրագրերի կարիքներին համապատասխան:*

Ռազմավարական այս նպատակի իրականացումը պայմանավորված է հետևյալ կոնկրետ խնդիրների լուծմամբ

- Կենտրոնի լսարանային ֆոնդի և ուսումնագիտական լաբորատոր բազայի առկա վիճակի գնահատում և փուլային արդիականացում՝ կրթական ծրագրերի և ուսանողական համակազմի կարիքներին համապատասխան.
- լսարանային, հետազոտական և լաբորատոր բազայի վերազինման ու արդիականացման աշխատանքների իրականացում՝ այդ նպատակով ավելացնելով Կենտրոնի բյուջեի համապատասխան ծախսերը.
- նոր ուսումնագիտական լաբորատորիաների ստեղծում՝ կրթական ծրագրերի զարգացման և նոր մասնագիտությունների պահանջներին համապատասխան.
- Կենտրոնի գործատու և նվիրատու կազմակերպությունների հետ համագործակցության ակտիվացում և ընդլայնում.
- տեխնիկական հագեցվածությամբ լսարանների թվաքանակի ընդլայնում.
- ԳԱԱ համակարգի ուսումնական և լաբորատոր տարածքների առավել արդյունավետ օգտագործում ուսումնական գործընթացի պլանավորման և կազմակերպման կատարելագործման նպատակով.

ՄԱՍ III
ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
(ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ)

ՆՊԱՏԱԿ 1. *Աջակցում հասարակության մտավոր, կրթական, տնտեսական, գիտական և մշակութային առաջընթացին՝ նպաստելով Կենտրոնի ու նրա գործունեության ճանաչմանն ու արտաքին օժանդակությանը:*

Ռազմավարական այս նպատակի իրականացումը պայմանավորված է հետևյալ կոնկրետ խնդիրների լուծմամբ՝

- հասարակության հետ Կենտրոնի կապերի զարգացում, ԶԼՄ-ների հետ Կենտրոնի ակտիվ համագործակցության ապահովում, Կենտրոնի օպերատիվ լրատվության և սեփական գովազդային նյութերի հրատարակման ընդլայնում.
- սոցիալական համագործակցության համակարգի զարգացում՝ որպես կենտրոնի գործունեության ինքնուրույն ուղղություն.
- սոցիալական ոլորտի գործընկերների շրջանակի ընդլայնում.
- սոցիալական համագործակցության պրակտիկ նշանակության և տնտեսական արդյունավետության մեխանիզմների մշակում.
- սոցիալական համագործակցության ձևավորված և արդյունավետ գործող համակարգի ստեղծում.
- սոցիալական գործընկերների հետ համատեղ իրականացվող միջոցառումների ու նախագծերի քանակի և արդյունավետության բարձրացում.
- նպաստում Կենտրոնի ներգրավմանը հանրային կարիքներին ուղղված տեղական, տարածաշրջանային և համազգային ծրագրերում:

ՆՊԱՏԱԿ 2. *Նպաստում շարունակական ուսումնառության և կրթության համակարգի զարգացմանը:*

Ռազմավարական այս նպատակի իրականացումը պայմանավորված է հետևյալ կոնկրետ խնդիրների լուծմամբ՝

- Շարունակական կրթության պահանջարկի և առաջարկի ուսումնասիրում՝ առաջարկի և պահանջարկի միջև փոխկապակցության հաստատում՝ ստեղծելով գործընկերային կապեր պետական մարմինների, մասնավոր ձեռնարկությունների և հասարակական կազմակերպությունների հետ.
- կրթության որակի ապահովման գործընթացների տարածում շարունակական ուսումնառության ծրագրերի վրա.
- շարունակական ուսումնառության կազմակերպման խրախուսում հեռավար, դրսեկության, անհատական և ուսուցման ոչ ավանդական այլ ձևերով՝ ընդլայնելու շարունակական կրթության մատչելիությունը.
- ՀՀ ԳԱԱ-ի գիտական հաստատությունների և Կենտրոնի պրոֆեսորադասախոսական մասնագիտական ներուժի հաշվառմամբ Կենտրոնում տարաբովանդակ և տարաբնույթ մասնագիտական որակավորման դասընթացների իրականացում տարբեր մասնագիտական խմբերի համար:

ՆՊԱՏԱԿ 3. *Կենտրոնի հիմնական գործատու կազմակերպությունների և հանրային կառույցների հետ համագործակցային կապերի ստեղծում:*

Ռազմավարական այս նպատակի իրականացումը պայմանավորված է հետևյալ կոնկրետ խնդիրների լուծմամբ՝

- Կենտրոնի գործակցային կապերի զարգացում մասնավոր և պետական հատվածների գործատու կազմակերպությունների հետ՝ մասնագետների նպատակային պատրաստման և մագիստրոսներին կարիերային նախապատրաստելու նպատակով.
- Կենտրոն – աշխատաշուկա փոխկապակցության գործուն համակարգի ստեղծում՝ զարգացնելով կապերը ՀՀ-ում զբաղվածության խնդիրները համակարգող պետական և հասարակական կառույցների հետ:

ՄԱՍ IV

ՈՐԱԿՅԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ)

ՆՊԱՏԱԿ 1. *Տեխնոլոգիապես հագեցած ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայրի ստեղծում՝ բոլոր մագիստրոսների և աշխատողների արդյունավետ գործունեությանը խթանելու համար:*

Ռազմավարական այս նպատակի իրականացումը պայմանավորված է հետևյալ կոնկրետ խնդիրների լուծմամբ՝

- ուսումնական գործընթացի իրականացման նյութատեխնիկական պայմանների բարելավում, Կենտրոնի ուսումնական և գիտական լաբորատոր բազայի զարգացում և արդիականացում՝ կրթական և հետազոտական ծրագրերի կարիքներին համապատասխան.
- կրթական ծրագրերի և ուսանողական համակազմի նոր կարիքներին համապատասխան լսարանային ֆոնդի և ուսումնագիտական լաբորատոր բազայի փուլային արդիականացում.
- լսարանային, հետազոտական և լաբորատոր բազայի վերազինման ու արդիականացման ապահովում՝ այդ նպատակով ավելացնելով Կենտրոնի բյուջեի համապատասխան ծախսերը.
- նոր ուսումնագիտական լաբորատորիաների ստեղծում՝ կրթական ծրագրերի զարգացման և նոր մասնագիտությունների պահանջներին համապատասխան.
- Կենտրոնի գործատու և նվիրատու կազմակերպությունների հետ համագործակցության ակտիվացում և ընդլայնում՝ ուսումնագիտական լաբորատոր բազաների համատեղ վերազինման և նոր լաբորատոր բազաների ստեղծման ուղղությամբ:

ՆՊԱՏԱԿ 2. *Կենտրոնի միասնական կենտրոնական տեղեկատվական համակարգի ստեղծում և վերջինիս մատչելիության ապահովում Կենտրոնի մագիստրոսների և աշխատակիցների համար:*

Ռազմավարական այս նպատակի իրականացումը պայմանավորված է հետևյալ կոնկրետ խնդիրների լուծմամբ՝

- Կենտրոնի կառավարման միասնական տեղեկատվական համակարգի ձևավորում՝ նրա գործունեության առանձին բնագավառների տվյալների տեղեկատվական բազաների ստեղծման և դրանց ինտեգրման միջոցով.
- տեղեկատվության ավտոմատացված մշակման և կառավարման ծրագրային փաթեթի զարգացում.
- Կենտրոնի միասնական տեղեկատվական համակարգն օգտագործողների վերապատրաստման իրականացում.
- Կենտրոնի ներքին փաստաթղթաշրջանառության մեջ տեղեկացման էլեկտրոնային ձևերի և էլեկտրոնային ստորագրության պրակտիկայի ներդրման խթանում.
- Կենտրոնի կառավարման էլեկտրոնային համակարգի ներդրում.
- հեռավար ուսուցման էլեկտրոնային ռեսուրսներով Կենտրոնի ապահովում.
- հեռավար ուսուցում իրականացնող դասախոսական համակազմի մասնագիտական պատրաստվածության մակարդակի բարձրացում.
- տեխնոլոգիական կարողությամբ և էլեկտրոնային (On-line) ուսուցման լսարանների ցանցի ձևավորում, Կենտրոնի ուսումնական գործընթացում վիրտուալ միջավայրի ստեղծման և օգտագործման խթանում.
- Վեբ-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգի ներդնում և զարգացում, խթանում Կենտրոնի հեռաուսուցման հարթակի կիրառությանը դասախոսների և մագիստրոսների շրջանում:

ՆՊԱՏԱԿ 3. *Բարձրորակ և արդյունավետ օժանդակ ծառայությունների տրամադրում՝ միտված մագիստրոսների կրթական, մասնագիտական և սոցիալական կարիքների լիարժեք բավարարմանը:*

Ռազմավարական այս նպատակի իրականացումը պայմանավորված է հետևյալ կոնկրետ խնդիրների լուծմամբ՝

- Կենտրոնում ուսումնառությունից և օժանդակ ուսանողական ծառայություններից մագիստրոսների բավարարվածության մակարդակի բարձրացում ,
- շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տվյալների հավաքման գործընթացի պլանավորում, կանոնակարգում և իրականացում՝ շրջանավարտների և հիմնական գործատուների հետ ստեղծելով հետադարձ կապի մեխանիզմներ.
- Կենտրոնի շրջանավարտների գործնական պատրաստականության բարելավում, պրակտիկաների կատարելագործում, բոլոր կրթական ծրագրերում շրջանավարտների անհրաժեշտ գործնական հմտությունների զարգացման ապահովում.
- մագիստրոսների տեղեկատվական խորհրդատվական, կարիերայի նախապատրաստման, աշխատատեղերի որոնման օժանդակության և մասնագիտական կողմնորոշման ծառայությունների համակողմանիորեն զարգացում.
- մագիստրոսների ֆինանսական օգնության ձևերի և մեխանիզմների զարգացնում:

ՆՊԱՏԱԿ 4. *Կենտրոնի տեղեկատվական ռեսուրսների զարգացում, դրանց արդյունավետ օգտագործման ու մատչելիության ապահովում:*

Ռազմավարական այս նպատակի իրականացումը պայմանավորված է հետևյալ կոնկրետ խնդիրների լուծմամբ՝

- Կենտրոնի տեղեկատվական ռեսուրսների (այդ թվում՝ նաև էլեկտրոնային) վիճակի ուսումնասիրություն և դրանց հետագա զարգացման առաջնահերթ ուղղությունների պլանավորում.
- տեղեկատվական ռեսուրսների մատչելիության և դրանց օգտագործման արդյունավետության բարձրացում,
- ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանից և էլեկտրոնային ընթերցասրահից Կենտրոնի մագիստրոսների և դասախոսական կազմի օգտվելու հնարավորությունների ընդլայնում.
- ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի էլեկտրոնային շտեմարաններից օգտվելու հնարավորությունների տեղեկատվության տարածման նպաստում.
- միջազգային գրադարանային ցանցերին և կոնսորցիումներին Կենտրոնի մասնակցության ընդլայնում.
- Կենտրոնի մագիստրոսների և գիտամանկավարժական կազմի համար արտաքին տեղեկատվական ռեսուրսների մատչելիության ապահովում.
-

ՆՊԱՏԱԿ 5. *Ընդունելության բազմազանեցված մուտք և համապատասխանություն*

Ռազմավարական այս նպատակի իրականացումը պայմանավորված է հետևյալ կոնկրետ խնդիրների լուծմամբ՝

- Կենտրոնի արտաքին և ներքին միջավայրերի վերլուծություն՝ մասնագիտական աշխատաշուկայի առկա պահանջմունքների և միտումների, պոտենցիալ դիմորդների նախասիրությունների (կողմնորոշվածության) ու կրթական կարիքների բացահայտման ու գնահատման նպատակով.

- ըստ ուսուցման ձևերի, կրթական աստիճանների և մասնագիտությունների Կենտրոնի ընդունելության պլանավորում՝ ուղենիշ ունենալով ՀՀ տնտեսական զարգացման գերակայությունները.
- *Կենտրոնի ընդունելության պրոֆիլի ընդլայնում և երկրի տնտեսական զարգացման կարիքներին ու աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցում.*
- առաջարկվող կրթական ծրագրերի և մասնագիտությունների մարքեթինգի ակտիվացում, անհրաժեշտ տեղեկատվության մատչելիության ապահովվում.
- Կենտրոնի գործունեությունը լուսաբանող գովազդային արշավի ընդլայնում և ակտիվացում.
- Կենտրոնի կառուցվածքում ուսանողների կարիերայի կենտրոնի ստեղծում.
- Դիմորդներին իրազեկման ուղղությամբ աշխատանքների իրականացում՝ հանրապետության բոլոր մարզերում և Արցախում:

ՆՊԱՏԱԿ 6. *Օտարերկրյա ուսանողների համակազմի ընդլայնում՝ ներդնելով հավաքագրման և ուսուցման կազմակերպման համալիր միջոցառումներ:*

Ռազմավարական այս նպատակի իրականացումը պայմանավորված է հետևյալ կոնկրետ խնդիրների լուծմամբ՝

- օտարերկրացի ուսանողների համար անգլիալեզու և/կամ ռուսալեզու ուսուցում կազմակերպելու նպատակով մագիստրոսի կրթական ծրագրերի պահանջարկված մասնագիտությունների գծով անհրաժեշտ դասախոսական ներուժի ապահովվում.
- օտարերկրյա ուսանողի ուսումնառության ուղեցույցների և դասընթացների, տեղեկագրքերի, կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատու նյութերի նախապատրաստում, պոտենցիալ դիմորդների շրջանում դրանց տարածում.

ՄԱՍ V
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐ

(ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ)

ՆՊԱՏԱԿ 1. *Կենտրոնի ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների որոնման և դրանց բազմազանեցման հարցերում նախաձեռնողականություն, կառավարման արդյունավետության ու վարչական ծառայությունների որակի բարձրացում:*

Ռազմավարական այս նպատակի իրականացումը պայմանավորված է հետևյալ կոնկրետ խնդիրների լուծմամբ՝

- Կենտրոնի ֆինանսական միջոցների ներհոսքի ավելացում և դրանց աղբյուրների բազմազանեցում.

- պետական գիտակրթական ծրագրերի մասնակցության ընդլայնման միջոցով՝ Կենտրոնի պետական ֆինանսավորման ծավալի ավելացում.
- Կենտրոնի մատուցած ծառայությունների և իրականացվող ծրագրերի շուկայավարման և առևտրայնացման քաղաքականության ընդլայնում և շարունակաբար զարգացում.
- վճարովի ծառայությունների և ծավալների ընդլայնում, այդ ծառայությունների եկամտաբերության բարձրացում և դրանցից ստացվող ֆինանսական միջոցների հաշվեկշռի մեծացում՝ Կենտրոնի ընդհանուր ներհոսքերում.
- ԳԱԱ-ի <<Հյուրերի տան>> և հանգստյան տների արտադրական բազաների հնարավորությունների առավելագույնս արդյունավետ օգտագործում.
- կրթական, հետազոտական և հանրային ծառայությունների ոլորտներում հայտարարվող միջազգային դրամաշնորհային ծրագրերին Կենտրոնի մասնակցություն:

ՆՊԱՏԱԿ 2. *Կենտրոնի զարգացման ծրագրերում շրջանավարտների, նվիրատու կազմակերպությունների և անհատների ներդրումների ծավալի ավելացում:*

Ռազմավարական այս նպատակի իրականացումը պայմանավորված է հետևյալ կոնկրետ խնդիրների լուծմամբ՝

- Կենտրոնի շրջանավարտների հետ կապի ամրապնդում,
- շրջանավարտների տվյալների էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ստեղծում.
- խրախուսում շրջանավարտների կողմից Կենտրոնի ֆինանսանյութական, տեղեկատվական և այլ բնույթի աջակցության նախաձեռնություններին.
- Կենտրոնի շրջանավարտների միության գործունեության նպատակաուղղում ինչպես Կենտրոնի շրջանավարտներին աշխատանքի տեղավորելու, այնպես էլ Կենտրոնի արտաքին գործակցային կապերի ձևավորմանը և արտաքին ներդրումների ու նվիրատվությունների խթանմանը:

ՆՊԱՏԱԿ 3. *Ֆինանսական ռեսուրսների կառավարման և օգտագործման արդյունավետության բարձրացում:*

- *Ռազմավարական այս նպատակի իրականացումը պայմանավորված է հետևյալ կոնկրետ խնդիրների լուծմամբ՝*

- Կենտրոնի 2014-2018 թթ. զարգացման ռազմավարական բյուջեի մշակում և ընդունում (կողմնորոշիչ ֆինանսական ցուցանիշներ)՝ սույն ռազմավարական ծրագրում բերված գերակա խնդիրների և առանձին գործողությունների իրականացման միջոցային հենքի ապահովման նպատակով.
- ֆինանսական միջոցների արդյունավետ ու նպատակային բաշխման ապահովում, միջոցների կառավարման օպերատիվության բարձրացում.
- բյուջետային ցուցանիշների և համապատասխան նորմատիվների համակարգի մշակում և ներդնում՝ ըստ Կենտրոնի գործունեության հիմնական բնագավառների.
- կողմնորոշիչ համամասնությունների սահմանում Կենտրոնի զարգացմանը, աշխատանքի վարձատրությանն ու ենթակառուցվածքի պահպանմանն ուղղված միջոցների:
- Կենտրոնի ֆինանսական կառավարման զարգացում և կատարելագործում՝ կադրային կազմի վերապատրաստման ու հմտությունների բարձրացման, կառավարման տեղեկատվական ցանցային համակարգերի օգտագործման միջոցով.

- Կենտրոնի վարչական և սպասարկող կազմի քանակական և որակական ցուցանիշների հետագա բարելավման ուղղությամբ աշխատանքների շարունակում.
- Կենտրոնի վարչական ծառայությունների արդյունավետության բարձրացում՝ գործունեության վերջնական արդյունքի նյութական խրախուսման մեխանիզմների ներդրման օգնությամբ:

ՆՊԱՏԱԿ 4. *Կենտրոնի կառավարման արդյունավետության բարձրացում՝ զարգացնելով կառավարման հաշվետվողականությունը, կառավարման տեղեկատվական համակարգերի ընդլայնված կիրառության ապահովում:*

Ռազմավարական այս նպատակի իրականացումը պայմանավորված է հետևյալ կոնկրետ խնդիրների լուծմամբ՝

- Կենտրոնի կառավարման պրակտիկայում ժամանակակից մենեջմենթի մեթոդների ներմուծում, ուսումնամեթոդական, գիտական-ինովացիոն, ֆինանսական և կադրային բնագավառների մենեջմենթի ենթահամակարգեր ձևավորում և ղեկավար ու վարչակառավարչական կազմի վերապատրաստման իրականացնում.
- լիազորությունների և պատասխանատվության բաշխման հստակեցում կառավարման ակադեմիական և ամբիոնային մակարդակներում.
- գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների (ԳԱՑ) համակարգի ներմուծում Կենտրոնի գործունեության բոլոր հիմնական բնագավառների համար.
- կառավարման համակարգի տեղեկատվական ապահովում, Կենտրոնի կառավարման բոլոր բնագավառներում ցանցային տեղեկատվական համակարգերի ներդնում:

ՆՊԱՏԱԿ 5. *Կոռուպցիոն ռիսկերի նվազեցում, Կենտրոնում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ապահովում:*

Ռազմավարական այս նպատակի իրականացումը պայմանավորված է հետևյալ կոնկրետ խնդիրների լուծմամբ՝

- Հակակոռուպցիոն միջոցառումները համակարգող հանձնաժողովի ստեղծում, որը կիրականացնի հակակոռուպցիոն իրազեկման ծրագրեր Կենտրոնի դասախոսների և ուսանողների շրջանում.
- վարչական հակակոռուպցիոն միջոցառումների կազմակերպում և կոռուպցիայի կանխարգելման և բացահայտման մեխանիզմների կատարելագործում՝ մեծացնելով վերահսկողությունը Կենտրոնի բոլոր ստորաբաժանումների (ուսումնական մաս, ամբիոններ, բաժիններ և այլն) վրա, դրանց գործունեության բոլոր ոլորտների թափանցիկության ապահովում.
- դասախոսների, վարչական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության և առաջխաղացման մեխանիզմների կատարելագործում՝ ապահովելով այդ գործընթացների անաչառությունն ու թափանցիկությունը.
- Կենտրոնի պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տեղակալման կարգում համապատասխան փոփոխությունների կատարում.
- գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկության, կիրառվող գնահատման համակարգի, չափանիշների և ընթացակարգի վերաբերյալ մագիստրոսների իրազեկվածության մակարդակի, ինչպես նաև ուսումնական գործընթացի վերահսկելիության բարձրացում :

ՆՊԱՏԱԿ 6. *ՈՒսանողական ինքնավարության մեծացում, Կենտրոնի կառավարմանը ուսանողների մասնակցության ընդլայնում, Կենտրոնում գործող ուսանողական կազմակերպությունների հզորացում։*

Ռազմավարական այս նպատակի իրականացումը պայմանավորված է հետևյալ կոնկրետ խնդիրների լուծմամբ՝

- Կենտրոնի կառավարման և որոշումների ընդունման գործընթացներում ուսանողների մասնակցության ընդլայնում, կառավարման տարբեր կոլեգիալ մարմիններում ուսանողների ներգրավվածության արդյունավետության բարձրացում.
- ուսանողական կազմակերպությունների գործունեության համար նպաստավոր պայմանների ստեղծում, նրանց ինստիտուցիոնալ զարգացմանը աջակցում.
- Կենտրոնում ընթացող կառուցվածքային, ծրագրային և կազմակերպական փոփոխությունների պլանավորման և իրականացման գործընթացում ակադեմիական ուսանողական խորհրդի դերի մեծացում.
- միջազգային կազմակերպություններում ու ծրագրերում Կենտրոնի ուսանողական կազմակերպության արտաքին կապերի զարգացմանը և ներգրավմանը նպաստում.
- Կենտրոնի վարչակառավարչական կազմի, արհեստակցական միության և ուսանողական ինքնակառավարման մարմնի միջև կառուցողական համագործակցության զարգացում.
- ուսանողների շրջանում իրենց իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ իրազեկվածության ու իրավագիտակցության մակարդակի բարձրացում.
- հոգևոր-մշակութային կյանքին ուսանողների մասնակցության նպաստում։

ՆՊԱՏԱԿ 7. *Կենտրոնի արտաքին կապերի համակողմանի զարգացման ապահովում։*

Ռազմավարական այս նպատակի իրականացումը պայմանավորված է հետևյալ կոնկրետ խնդիրների լուծմամբ՝

- մասնավոր և պետական հատվածների գործատու կազմակերպությունների հետ Կենտրոնի և առանձին բաժինների փոխշահավետ ռազմավարական կապերի զարգացում,
- Կենտրոն–տնտեսություն փոխկապակցության գործուն համակարգի ստեղծում՝ զարգացնելով կապերը ՀՀ-ում զբաղվածության խնդիրները համակարգող պետական և հասարակական կառույցների հետ,։

ՎԵՐՋԱԲԱՆ

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի ռազմավարական ծրագրի իրագործման արդյունքում կրթության, գիտության և տնտեսության ոլորտներում կարձանագրվեն հետևյալ ձեռքբերումները՝

- Երկրի սոցիալական զարգացման պահանջներին համահունչ կիրականանան կրթության արդիականացման առաջնային ուղղությունների հստակեցում, գիտակրթական ինտեգրման հիման վրա կստեղծվեն հայրենական կրթության համակարգային բարեփոխումների համար իրատեսական մեխանիզմներ: Արդյունքում գործուն օգնություն կցուցաբերվի պետական նախաձեռնություններին կրթության, տնտեսության, սոցիալական քաղաքականության և այլ ոլորտներում.
- կստեղծվեն և կյուրացվեն նոր սերնդի կրթական ծրագրեր՝ համաշխարհային միտումներին և աշխատաշուկային համապատասխան.
- ազգային կրթության ոլորտը կապահովի գիտահետազոտական ունակություններով և կարողություններով, նորագույն կրթության զարգացմանը բնորոշ նախաձեռնող մտածողությամբ մասնագետներով.
- կձևավորվեն նորարարական կրթական մոդելներ և տեխնոլոգիաներ, որոնք կապահովեն կրթական գործունեության արդյունավետությունը, որակյալ կրթություն ստանալու հնարավորությունը հասարակության լայն զանգվածների համար.
- կպատրաստվեն գիտնական-հետազոտող կադրեր, տաղանդավոր երիտասարդությունը կներգրավվի գիտական հետազոտություններին, կավելանա գիտակրթական ոլորտի գրավչությունը երիտասարդների շրջանում.
- կամրապնդվեն և կզարգանան միջազգային կրթական և գիտական կապերը, որոնք ուղղված են փոխադարձ հետազոտական գործունեության՝ գիտական ձեռքբերումների միջազգային ճանաչմանը.
- մարդկային կապիտալի և կրթվածության հաշվին կարձանագրվի տնտեսության արագ աճ՝ իբրև պետության ազգային անվտանգության հիմք.
- կամրապնդվեն համագործակցային կապերը երկրի տնտեսության տարբեր ճյուղերի, գիտակրթական կենտրոնների, սոցիալական ոլորտի և բիզնեսի միջև, որոնց շնորհիվ կերաշխավորվի ուսումնական գործընթացում բարձր սոցիալական պատասխանատվության և առաջադեմ կրթական տեխնոլոգիաների ներդրումը: